




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԳՅՈՒՆԱՏՆՏԵՍ՝ Լ. ՎՈՍԿԱՆՅԱՆ

== 1931 թվի ==

**ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

631.52

Ո-23

ИНСТИТУТ
ТЕХНОЛОГИИ
Древесной
СОСР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՇՐԱՏԱՐԱԿԳ.
ՄՈՍԿՎԱ — 1319 — IX — ՌՈՍՏՈՎ

631.52

D-23

ԳՅՈՒՂԱՏՆՏԵԱ՝ Լ. ՎՈՍԿԱՆՅԱՆ

1931 թվի

ԱՅՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱԺԽԱՏԱՆՔՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ДОСТОПОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ընկեր Ստալինն՝ արդյունաբերական աշխատողների կոնֆերանսում ցույց տալով, թե սոցիալիզմի շինարարության ներկա ետապում վո՛րքան մեծ նշանակություն ունի տեխնիկային տիրապետելը, ասում եր.

«Մենք մի շարք խոշորագույն խնդիրներ լուծեցինք: Իշխանությունը մեր ձեռքն առանք: Միջակ գյուղացուն դեպի սոցիալիզմի ճանապարհն ուղղեցինք: Շինարարության տեսակետով ամենակարևորն արդեն արել ենք: Մեզ քիչ բան մնաց անելու,—տեխնիկան ուսումնասիրել և յերբ այդ ել կատարենք, այն ժամանակ այնպիսի տեմպեր կունենանք, վերոնց մասին այժմ յերազել իսկ չենք կարող»:

Աշնանացանի կոնտրակտացիան, գյուղատնտեսության համառարած կոլեկտիվացումը, սովխոզ-կոլխոզշինարարությունն ու գյուղատնտեսության տեխնիկապես սպառազինելը—այս բոլորը մեր առաջ մի կարևորագույն խնդիր ե դնում լինվիդացիայի յենթարկել կոլխոզային ու սովխոզային մասսաների տեխնիկական հետամուտցությունը:

16.07.20

Ներկայումս յուրաքանչյուր կոլտոգային աշխատավորին, ասեն մի սովխոզային բանվորին յերկրագործական տեսիլական գիտելիքներով զինելը նշանակում է արտադրական կարևորագույն խնդիրներից մեկը լուծել, աշխատանքի արտադրողականութունը բարձրացնել, աշխատանքի, լծկան ուժերի, գյուղատնտեսական գործիքների ու մեքենաների կոլեկտիվ ոգտագործման նպաստել, կոլխոզներն ու սովխոզներն ամրապնդել։ Այս ճանապարհով միաժամանակ և նպաստած կլինենք դաշտային աշխատանքների արդյունքների բարձրացման։

Հյուսիսային Կովկասում ներկա 1931 թվի գարնանից նոր 72 հատ մեքենա-տրակտորային կայաններ են կազմակերպվում։ Նախկինների հետ միասին առած՝ մեքենա-տրակտորային կայանների թիվը 126-ի յե հասնելու, վերոնք լծկան ուժերի փոխարեն պետք է աշխատեն։

Մեր յերկրամասի բաժրակի դաշտերում 22 մեքենա-տրակտորային կայաններ են աշխատելու։ Խորհրդային իշխանութունն՝ այդպիսի կոլտուրաներ կազմակերպելու համար, 500 հազար ռուբլի յե հատկացրել։ Յերկրամասի տրակտորային պարկը լրացվում ու նորոգվում է։ Տրակտորոցներուից 1340 հատ «Յեյսի» ու «Ինտերնացիոնալ» սիստեմի տրակտորներ պիտի ստացվին։ Հացահատիկով հարուստ սովխոզները պետք է ստանան 19 հազար մեխանիկ ուժեր, չհաշված այն տրակտորները, վորոնք մեքենա-տրակտորային հատուկ բրիգադներում են լինելու և կոլխոզային դաշտերում աշխատելու։ Այլև՝ նոր տրակտորները պետք է օգտագործի այլ նոր սիստեմի տրակտորների մեջ մտնեն։

Բերքի քանակը բարձրացնելու նպատակով անցյալ գարնան բաց ելին թողնված հատընտիր, մաքուր ու տեղական պայմաններին համապատասխան սերմացուներ, վորոնք

փոխարեն հասարակ հատիկներ ելին ստացված։ Նույնը պիտի կատարվի և աշնանացորենի վերաբերմամբ, վոր անշուշտ 1931 թ. աշնանացանի կամպանիայի հաջողութան համար մեծ նշանակութուն կունենա։ Բացի արանից՝ այս տարվա աշնանացանը ավելի լավ պայմանների մեջ պիտի կատարվի, քան թե անցյալ տարի, վորովհետև աշնանացանի կամպանիայի նախորդակին Հյուսիսային Կովկասում գյուղատնտեսութունը 82 տոկոսով արդեն կոլեկտիվացման է յենթարկված։

Կոլխոզներն այժմ անհամեմատ ավելի ուժեղ են և այս հանգամանքը նույնպես կաշակցի աշնանացանի հաջող կատարման։ Հարկավոր է լիակատար չափով աշնանացանի կամպանիան ապահովել տրակտորներով, մեքենաներով ու կենդանի քարշող ուժերով։

Անցյալ տարվա համեմատությամբ՝ այս տարվա աշնանացանը յերկու անգամ ավելի կմեքենայացվի։ Մի քանի տեղերում մեքենայացման պակասը ձեռքերով ու յեզներով պիտի լրացվի։ Մեծ ուշադրության են առնվում և պիտի առնվեն, վոր տրակտորային պարկը նորմաներից ավելի աշխատանքներ կատարե։ Հողօժողումը և Հյուսիսային Կովկասի Յերկրային Հողվարչութունը դաշտերում տրակտորների աշխատանքի համար որական 21 ժամից վո՛չ պակաս են հատկացնում, վոր նույնպես աշնանացանի հաջողության նպաստելու յե։

Աշնանացանի գյուղատնտեսական ամբողջ ինվենտուրը վերանորոգող արհեստանոցները պետք է ամրապնդա՝ աշխատեն, վոր ժամանակին ամբողջ վերանորոգումը վերջացրած լինեն։

Աշխատանքի կազմակերպումն ևս մեծ դեր է խաղալու։ Աշնանացանի հետ կապված բոլոր աշխատանքները



61133-67

պետք է գործարքային սկստեմի հիմունքով տարվեն: Աշնանավարի ու աշնանացանի բոլոր արտադրական բրիգադները պետք է իր ժամանակին կազմակերպված լինեն: Ցանքսը սկսելուց 10 որ առաջ հարկավոր է աշխատանքներին հետ կապված բոլոր խնդիրները կոլեկտիվներում և բրիգադներում պարզաբանել: Սոցմրցությամբ ու հարվածայնությամբ պետք է իրագործվի արտադրողության վորակի բարձրացումը: Աշնանացանի հետ կապված բոլոր աշխատանքները այնպես պետք է հիմնավորված լինեն, վոր գյուղատնտեսութան սոցիալիստական վերակառուցումը հաջողությամբ պսակվի:

Հայտնի չէ, վոր հողը անդադրաբար նյութեր ու խոնավություն այն ժամանակն է վերցնում, յերբ շատ կանուխ է վարված լինում: Հողն իր անդադրաբար նյութերի մի մասն ու խոնավությունը կորցնում է, յերբ ցանքսն ուշանում է կամ վարը: Սրա հետևանքը—բերքի նվազումն է:

Գրքույկին նպատակն է՝ այս տարվա աշնանացանի ժամանակ ոգնել կոլեկտիվին ու սովխոզային աշխատողներին, վոր հողամշակության տեխնիկային լավ տիրապետեն ու լավ բերք ստանան:

Բոլոր հասկավոր հացաբույսերն յերկու խմբի են բաժանվում—գարնանային ու աշնանային: Տաք յերկրներում այս տարբերությունը համարյա կարելի չէ նկատել, վորովհետև այդ տեղերը հացաբույսերի մեծ մասն աշնանն է ցանվում:

Հյուսիսային Կովկասի հարավային տաք ռայոններում աշնան ցանված գարնանացորենն ավելի առատ բերք է տալիս, քան յերբ նույնը գարնանը ցանվել: Թեև մի քանի ռայոններում աշնանացանի ու գարնանացանի մեջ յեղած տարբերությունը վերանում է, բայց աշնանացան ցորենի

առանձնահատուկ կողմն այն է, վոր նա գարնանը ցանվելիս՝ առաջին տարին հասկ չի տալիս, բերք չի ունենում: Յերբ գարնանը՝ գարնանացանի հետ միաժամանակ և աշնանացորեն սերմանենք, կտեսնենք, վոր վերջինս բուսնելուց հետո ճյուղավորվում է մինչև ուշ աշուն, բայց հասկեր չի ունենում: Ձմեռը նրա ճյուղավորման, թփեր կազմելու վրա չի հասնում:

Բայց աշնանացան ցորենը ձմեռելով՝ հաջորդ տարվա գարնանը կրկին զարգանում է. ցողունը հաստանում և հասկեր է տալիս:

Ի՞նչ է պատճառը: Աշնան հացաբույսերը զարգանալու և բերք տալու համար՝ իրենց սկզբնական զարգացման ժամանակ վորոշ հովացումն (охлаждение) են պահանջում: Ահա այս է պատճառը, վոր գարնանը ցանվելով՝ առաջին տարին բերք չեն տալիս:

Հայտնի չէ, վոր աշնանային հացաբույսերի սերմերը զանազան բարեխառնության տակ աճում են. այսպես՝ հաճարն աճում զարգանում է, յերբ հողը 12 աստիճան տաքություն ունի, իսկ աշնան ցորենը՝ յերբ 3-4 և կես աստիճան տաքություն լինի: Սերմերի աճելության ու զարգացման համար ջերմության ամենալավ աստիճանը 25 է հողում: Աշնանային հացաբույսերից ամենաշուտ հասնողը աշնանային գարին է, վոր 280-308 որերի ընթացքով՝ հաշվելով սրա մեջ նաև ձմեռային ժամանակամիջոցը, հասնում է: Հաճարը՝ 280-215 որերի ընթացքով է հասնում, իսկ աշնանացորենը՝ 204-350 որերում: Աշնանային հացաբույսերը շատ մեծ քանակությամբ խոնավություն են պահանջում, մանավանդ՝ յերբ թփավորվում և հասկեր են կապում: Մեր տեղական պայմաններում այս յերևույթը մեղմ մայիս ամսին ենք նկատում: Այն ժամանակ աշնանացան-

ները շատ են աճում, բարձրանում և մայիսյան անձրևները լավ բերք տալուն մեծապես նպաստում են: Գարնանացորենից մի քանի որ առաջ հասնելով՝ նրանք այրվելուց, մըրկվելուց, սմբկվելուց (կծկվելուց) ազատ են մնում, վերոք և մեր շրջանի պայմաններում արժեքավոր կուտուրաններ են լինում. բայց մեր շրջանում հաճախ է պատահում նաև այն յերևույթը, վոր շատ հացաբույսեր արևի կիզիչ ճառագայթների տակ մրկվելուց, սմբկվելուց կորստի յեն մատնվում:

Աշնանացորենն ու գարին լավ հող են պահանջում. նույնիսկ թեթև ավազոտ հողամասերը նրանց համար անպետք են, վերովհետև նրանք խոնավություն չեն պահպանում, վոր ցորենին անհրաժեշտ է: Նրանց համար ամենաօգտավորը սևահող գոտին է: Ճահճային ու աղտաղտուկ հողերը նույնպես անպետք են:

Աշնանային ցորենն ու հաճախ կարող են բսնել ու դարգանալ Հ. Կովկասի բոլոր հողամասերում. բայց աշնան ցորենն ավելի տաք շրջաններում և տարածված (Դոնեցկի, Շախտ-Դոնսկոյ և մասամբ Դոնի ու Սալսկի շրջաններում) և Սալսկի շրջանի հյուսիս-արևելյան մասում:

Հյուսիսային շրջաններում, ուր աշունը ցուրտ է և կարճ, աշնանային հաճախ մեծ ընդունելություն է գտել, վորը առանձնապես պահանջկոտ չէ և ցրտերին դիմացկուն:

Հարավային շրջաններում, ուր աշունը տաք է և շաքունավիում է բավական յերկար, ձմեռն էլ վո՛չ այնքան ցուրտ, ավելի ընդունված են աշնանային ցորենն ու հաճախ Յեթե Հյուս. Կովկասի քարտեզի Շախտի, Կոնստանտինովսկայա և Զիմովնիկ կոչված տեղերի վրայից մի դիժ անց-հացենք, կնկառենք, վոր այս գծից դեպի հարավ սեպտեմբերի կեսերին ու հոկտեմբերին մեծ քանակությամբ անձ-քն է գալիս, վոր աշնանացորենին շատ է նպաստում. այս-

տեղե լինումնաև յերկարատե ու տաք աշուն: Այս պատճառով այս գծից հարավ գտնված բոլոր ուայոնները աշնանաբույսերի համար լավ ուայոններ են համարվում:

Ներկա աշնանացանի կամպանիայի ժամանակ մեր գյուղատնտեսության մեջ աշնանացան բույսերը պետք է մեծ գեր կատարեն: Առաջ, յերբ դեռ մարդիկ հողի մշակման տեխնիկային ծանոթ չէին, աշնանացան անելու համար՝ դարնանային հացաբույսեր եյին ցանում, ուստի և բերքը շատ անկայուն էր լինում: Այժմ փորձառություն ձեռք բերվել է տեղական պայմաններին հարմարվելով՝ կոլխոզներն ու սովխոզները աշնանացանի տարածությունն ընդարձակում են, մանավանդ ընդարձակվեցին վերջին ժամանակներս: 1913 թվին աշնանային ցանքների ընդհանուր տարածությունը 3 միլ. 558 հազար հեկտարի յեր հասնում, իսկ դարնանային ցանքները (ցորեն, գարի, վարսակ, յեզիպտացորեն և կորեկ) բռնում եյին 6 միլ. 754 հազար հեկտար տարածություն, 1927 թվի աշնանային հացաբույսերի հըրադարակը դարձավ 4 միլ. 86 հազար հեկտար, այնինչ գարնանացանը բռնեց միայն 4 միլ. 149 հազար հեկտար տարածություն: Վերոհիշյալ թվերը ցույց են տալիս, վոր աշնանացանն ավելի ընդարձակվել է, իսկ դարնանացանը 1913 թվականի համեմատությամբ նվազել: Աշնանացանի պատշաճ ավելի լայն չափով ու հավասարապես ոգտագործվում են աշխատավոր ձեռներ, լծկան ուժեր ու ինվենտար, վորովհետև ցանը աշնանն է կատարվում, իսկ հավաքումը դարնանային հացաբույսերից առաջ: Դարձյալ՝ փորձնական կայանի փորձերը ցույց են տված, վոր աշնանացանն ավելի առատ բերք է տալիս, քան թե դարնանացանը: Յեթե համեմատելու լինենք աշնանային հացաբույսերի լավ դաշտերից (սև ցել և կոնաչ ցել) աված բերքը գյուղացիա-

կան դաշտերից ստացված բերքի հետ, կնկատենք, վոր բերքը ավելի նվազած է:

Իհնչ ե պատճառը: Հիմնական պատճառը հետևյալ պայմանների մեջ պիտի վորոնել. 1) ձմեռային անհաջող պարագաներ. 2) քամիների պատճառով հողի փոշիներով ծածկվելը. 3) գարնանային անձրևների բացակայությունը ու չոր աշուն. 4) լավ չմշակված հողամասերի վրա մոլախոտերի (сорн. трава) տարածում. 5) հիվանդություններ ու վնասատուներ, վորոնք յերբեմն մեծ քանակությամբ են լինում. 6) ցանվելիք սերմացուների անբավարարությունը և կամ տեսակի անհաջող ընտրությունը, սերմացուների վատ զտումն ու ֆորմալինով անբավարար ախտահանումը, աշնանացան հացաբույսերի մշակման անկանոն յեղանակներ: Այսպես՝ աշնանացանի անբավարար ու նվազ բերքատվությունը կապված է մշակման վատ յեղանակների, յերաշտություն, փոթորիկների ու զանազան վնասատուների հետ, վորոնք մեծ ազդեցություն ունեն:

Հարց ե ծագում՝ թե կարելի՞ յե արդյոք աշնանացանի բերքատվությունը բարձրացնել և նրան ավելի դիմացկուն դարձնել: Տեղական փորձնական կայանների յերկարամյա փորձերը պարզած են, վոր այդ հնարավոր ե կատարել: Հաստատապես համոզվելու համար մի քանի որինակներ մեջ բերենք: Յերկար տարիներ Հյուսիս. Կովկասի փորձնական կայաններն այս խնդիրներով զբաղվելով՝ մի քանի յեղանակներ, պրիոմներ մշակեցին, վորոնց գործադրությունը աշնանացանի բերքատվության բարձրացման նպատակով ե: Յեթե համեմատելու լինենք այլ շրջանների աշնանացանի բերքատվությունը փորձնական կայանի (վորը սովյալ ռայոնի հողամասում ե գտնվում) ստացած արդյունքների հետ, կհամոզվենք, վոր փորձնական կայանները մեծ

նպատակների յեն հասել: Դրանցիկ շրջանում աշնանացորեների մեկ հեկտարից միջին թվով ստացվել ե

1913 թ.	14 թ.
5,1 ցենտ.	4,8 ց.

15 թ. 16 թ. 17 թ. 18 թ. նույն ժամանակաշրջանում Դոնեցկի փորձնական կայանում մեկ հեկտարից ստացվել ե.

1914 թ.	15 թ.	16 թ.	17 թ.	18 թ.	19 թ.
19,3 ցենտ.	25,5 ց.	18,5 ց.	18,4 ց.	18,7 ց.	21,0 ց.

Նախկին Ռոստովի շրջանում միջին թվով մեկ հեկտար աշնանացորենից ստացվել ե.

1914 թ.	15 թ.	16 թ.	17 թ.
8,6 ց.	9,7 ց.	9 ց.	7,2 ց.

18 թ. 19 թ. 21 թ.

1,3 ց.	12,6 ց.	0,7 ց.
--------	---------	--------

Նախկին Ռոստով-Նախիջևանյան փորձնական կայանում նույն թվականներին յեղել ե.

1914 թ.	18 թ.	16 թ.
10,4 ց.	24,6 ց.	29,1 ց.

17 թ. 18 թ. 19 թ. 21 թ.

6,1 ց.	13,0 ց.	16,2 ց.	5 ց.
--------	---------	---------	------

Կուբանի շրջանի համար կարելի յե հետևյալ աղյուսակն ունենալ.

1924 թ.	1925 թ.	1926 թ.
7,3 ց.	6,1 ց.	7,2 ց.

Իսկ նույն տարիներում Կուբանի փորձնական կայանում հետևյալն ե ստացվել

1924 թ.	25 թ.	26 թ.
21,6 ց.	24,2 ց.	23,2 ց.

Վերոհիշյալ աղյուսակները մեզ համոզում են, վոր բոլոր շրջանների հողամասերում բերքատվությունը՝ նույն հողամասերում գտնված մոտակա փորձնական կայանի բերքի համեմատությամբ անհամեմատ նվազ ե: Այսպես՝ մեր կոլխոզների փորձերը ցույց են տալիս, վոր կոլխոզների դաշտերի բերքը՝ անհատական գյուղացիների մշակած հողերից ստացված բերքերի հետ համեմատելով, անհամեմատ բարձր ե: Կոլխոզներում 1926 թվականին 1 հեկտար ցորենը տվել ե 8-9 ցենտ., իսկ անհատ գյուղացիական ցանը՝ 5-6 ցենտ: Այսպես ուրեմն, աշնանային հացերի

բերքատվութեան բարձրացումը և նրանց ավելի դիմացկուն նուություն տալը հեշտ լուծելի խնդիր է:

Սովորական դիտողություններն իսկ հաստատած են, վոր բերքատվութեան բարձրացումը սերտ կերպով կապված է անձրևների քանակի հետ և թե յե՞րբ են նրանք տեղում: Ներկայիս գիտութեան ու տեխնիկայի պայմաններով մենք չենք կարող մեր մշակելիք հողերի ու բույսերի համեմատ անձրև տեղացնել այն ժամանակ, յերբ նրանք հարկավոր են: Ուստի սովխոզների ու կոլխոզների գլխավոր ուշադրութեանը պետք է կենտրոնանա հողի վրա, վոր խոնավութիւնն պահպանե: Փորձնական կայանները յերկար տարիներ փորձեր են կատարած, թե ի՞նչ կերպով և յե՞րբ հողը պետք է մշակել, վոր նրա մեջ յերկար ժամանակ ու մեծ քանակութեամբ խոնավութիւն պահպանվի: Հյուսիսային Կովկասի փորձնական կայանները, սովխոզներն ու կոլխոզներն այն յեզրակացութեան են յեկած, վոր տարբեր ցելուտատեղերի, վարելահողերի (пар) մշակմամբ կարելի յե բերքատվութիւնը բարձրացնել և աշնանային հացաբույսերը ժամանակին ապահովել: Ահա ինչու հարկավոր է, վոր մենք ծանոթանանք, թե ի՞նչպէս պետք է զանազան տեսակի վարելահողեր, ցելուտատեղեր մշակել: Այժմ կա՞մ մաքուր սև հող ենք մշակում և կա՞մ վորեք բույսով ծածկված ցել: Յեթե վարելատեղը բուսականութիւնից ազատ է, նամա՞նք է կոչվում. իսկ յեթե վարելահողը վորեք բույսով է բռնված, նա բռնված է կոչվում: Մաքուր ցելատեղը զանազան ժամանակներում վարվելով՝ տարբեր անուններ է ստանում. այսպէս՝ աշնանը վարված ու մյուս ամառը մշակված հողը սև ցել է կոչվում: Գարնանացանից անմիջապէս հետո արորդադրված հողը, վոր սովորաբար ապրիլի վերջին կամ մայիսին է լինում, վաղ գարնանային, ապրիլյան կամ

մայիսյան ցելատեղ է կոչվում: Վերջապէս, կան հետաճաց վարելահողեր, վորոնք հունիսյան, հուլիսյան են կոչվում և կամ գյուղացիական, վորովհետև մեծ մասամբ այսպէս էլին վարվում գյուղացիները: Այն արտերը, վորոնք յեզիպտացորենով են բռնված, յեզիպտացորենի ցելեր են կոչվում, իսկ այլ բույսերով բռնվածները՝ նույն բույսերի անուններն են կրում: Վերջապէս՝ յերբ վարելահողի վրա կրկնակուղ, քախարանի (пропашный) բույսեր են աճում, կըրկնակոսային, քախարանային է կոչվում:

Բացի այս բոլորից՝ բուսականութեամբ բռնված ցելերը մի քանի աչքի ընկնելիք տեսակներ են լինում, որինակ, յեթե վարելահողը յեզիպտացորենով է բռնված, վոր ապագայում սերմեր ստացվեն և նրանց շարքերի մեջ մի մետր լայնութեամբ տարածութիւններ կան, ուր հատուկ շարքացանով աշնանացան է սերմանված, այս տեսակի ցելը ամերիկյան կոչումն ունի: Յեթե շարքերի մեջ 2-4 մետր լայնութեամբ տարածութիւններ են թողնված, վորտեղից կարող է ձիու կամ տրակտորի շարքացանը համարձակ անցնել, այդպիսիները խեստնյան ցել են կոչվում:

Վերջացնելով մեր խոսքը բուսականութեամբ բռնված ցելուտատեղերի մասին՝ անցնենք այժմ խոսելու ակոսավոր կոչված հանդերի մասին: Սրանք մաքուր ու բուսականութեամբ աճած ցելերի մեջտեղն են բռնում: Կուլիսավոր կոչված ցելի էյութիւնը նրա մեջ է, վոր 10-20 մետր իրարից հեռու տարածութեան վրա յեզիպտացորեն կամ արեւածաղիկ են ցանում՝ քամիների դեմ առնելու համար և շարքերի մեջ ընդհանուր չափով նույն տարածութիւնն են պահպանում: Մի քանի շարք արեւածաղիկ կամ յեզիպտացորեն տնկելով՝ կարծես թատերական կուլիսներ են կազմում և այս կուլիսների մեջ գտնված տարածութեան վրա աշնա-

նացորեն են ցանում: Այս տեսակ արտերի գլխավոր առա-
վելությունն այն է, վոր ձմեռը ձյան առաջն են բռնում
կուլիսները:

Հարկավոր է նկատել, վոր գտնվում են գյուղացիներ,
վորոնք հացը հավաքելուց հետո՝ անմիջապես աշնանային
ցորեն են ցանում, վարելով հողը մնացած ցողունների ու-
արմատների հետ, առանց վարելահողին հանգստություն
տալու: Յերբեմն ել ցան են կատարում առանց վարելու, այլ
բավականանում են միայն հողը տափանելով (посев наво-
лком):

Այժմ մի քիչ ել խոսենք մաքուր ու բռնված հողերի
մշակման տեխնիկայի մասին: Նախ խոսենք, թե ի՞նչպես
կանոնավոր կերպով կարելի յե մաքուր ցել մշակել, վոր բո-
լոր մաքուր ցելերից ամենալավը համարվի: Փորձնական
կայաններէ՝գիտողությունները պարզում են, վոր վաղ գար-
նանային, կանաչ ցելեր պետք է վարել ապրիլի վերջում և
ամբողջ մայիսը: Հարկավոր է ինկատի ունենալ, վոր ինչ-
քան ցելուտատեղը շուտ վարված լինի, այնքան ել կարելի
յե հուսալ լի առատ բերքատուություն կլինի: Հարկավոր է
վար կատարել 15-18 սանտ. խորությամբ: 18-ից խոր կա-
տարելն ավելորդ է, այստեղ դեր խաղացողը խորությունը
չե, այլ թե վոր ժամանակ է կատարվել: Ժամանակամիջոցը
ավելի վճռական դեր է խաղում: Սրա հետ ապագայում պետք
է կանոնավոր մշակել՝ վորի հետ կապված է և բերքատու-
թյունը: Մաքուր ցելը կանոնավոր մշակելու համար հարկա-
վոր է հետեյայնները կատարել. 1. վարելահողն արորադրե-
լուց հետո՝ անմիջապես պետք է տափանել և այս կարևոր
է, վոր ցելը հարթ մակերևույթ ունենա և սպասիկ չորանա-
լուց պահպանվի: Հարկավոր է տափանել յերկու անգամ:
2. մոլախոտերն ու հողի մակերևույթի վրա գտնված կոշ-

տերը հարկավոր է մաքրել՝ մանավանդ հորդառատ անձրե-
ներից հետո: Ցելի մշակման նպատակն է՝ մոլախոտերը
վռնչացնել, դետնի խոնավությունն ավելացնել ու պահպա-
նել և վարելահողում անդարար նյութերի պաշար հավաքել:
Կանոնավորապես մշակված ցելուտատեղը սերմանման ժա-
մանակ մեծ քանակությամբ խոնավություն իր մեջ կրո-
վանդակե և ժամանակին ցանված աշնանային հացարույսե-
սերի բերքը կապահովի:

Մոլախոտերը պետք է թաթավոր արորով (лапчат.
культивато) վռնչացնել, չլինելու դեպքում՝ քախանարքով
(запашник) թեթևակի վարել՝ առանց հողը շուտ տալու— և
այնպես, վոր 7 սանտ. խոր չլինի: Մեծ անձրևներից հետո
հողի մակերևույթը կոշտանում է: Այս դեպքում արար
պետք է ծանր տափանով տափել: Կանաչ ցելը յերկրորդ ան-
գամ խոր վարել պետք չէ. յերկրորդ վարը հողին վնաս է
տալիս, նրան չորացնում է: Աշնանացանի ժամանակ հար-
կավոր է նախապատրաստական աշխատանքներ կատարել—
վարված հողը յերկու անգամ տափանել: Ցեթե վարելահողը
մոլախոտերով է ծածկված՝ հարկավոր է բազմախոտի արո-
րով (культиватор) և կամ քախանարքով հողը մշակել 4-7
սանտիմետր խորությամբ:

Գալով սև ցելի մշակման՝ այստեղ ել պետք է կա-
տարենք այն ամենը, ինչ վոր կատարում էյինք կանաչ ցել
մշակելիս: Տարբերությունն այն է միայն, վոր սև ցելն աշ-
նանն ենք կատարում, իսկ կանաչ ցելը՝ դարնանը:

Խոսենք բուսականությամբ բռնված ցելերի մասին:
Այն վարելահողերը՝ վորոնք կրկնակուսվող (запашн.) բույ-
սերով են բռնված և կամ կուլիսների մեջ ձգված տարա-
ծություններ ունեն, ճիշտ այնպես են մշակվում, ինչպես սև
ցելերը: Աշնանացանը կատարում են, յերբ վարելահողի

վրա գտնված բուսականությունը հավաքում են: Խերսոն-
յան ու Կուլիսավոր ցելերում՝ բուսականությունը հավաքե-
լուց առաջ, տարածությունների վրա ցան են կատարում: Ցա-
նելուց առաջ ցելի հողը պետք է լավ վարել 5-6 սանտ.
խորությամբ ու շրջանաձև (ДИСКОВОЙ) տափանով տափանել:
Կուլիսավոր ցելերի Կուլիսները զարնանը պետք է հավաքել
և հողը տափելով՝ զարնան ցորեն ցանել: Կուլիսներում
զարնանացան կարելի չէ այն ժամանակ միայն կատարել,
յերբ աշնանային ցանի բերքը սերմեր ունենալու նպատա-
կին չի ծառայում:

Մեր յերկրում վո՞ր ցելն ամենալավն է համարվելու:

Մեր յերկրի փորձնական կայանները, բազմամյա փոր-
ձերից հետո տալիս են վորոշակի ցուցմունքներ, թե վո՞ր
ցելերը աշնանային հացաբույսերով կարող են առատ բերք
տալ: Դոնեցկի փորձնական կայանի գիտողություններից
յերևում է, վոր Դոնեցկի շրջանում 7 տարվա ընթացքում
աշնանացաններ կատարելով՝ ապրիլյան ցելը ամենաբարձր
բերքն է տվել. մի հեկտարը 16,9 ցենտ. է տված: Ռոսսո-
վի մոտ գտնված նախկին Հյուս. Կովկասյան փորձնական
կայանը՝ 10 տարվա ընթացքում փորձեր կատարելով՝ կա-
նաչ ցելերից միջին թվով ամենամեծ բերքն է ստացել:
Յեյսկի փորձնական կայանում ամենաբարձր բերքը մայիս-
յան ցելից է: Ստավրապոլի փորձնական դաշտերում բերքի
հետևյալ պատկերն է ստացված. արևելյան փորձնական
դաշտից, ավելի չորային մասում, յերեք տարվա ընթացքում
միջին թվով, լոբու արտում ցանված աշնանային ցորենը
ամենաբարձր բերքն է տվել—մեկ հեկտարից 20,1 ցենտ.
ուրեմն այստեղ լոբու ցելն է ամենաբարձր բերք տվողը:
Արևմտյան փորձնական դաշտում, ուր ավելի խոնավություն
կա, նույն ժամանակաշրջանում ամենաբարձր բերքը սե

ցելն է տվել—մի հեկտարից՝ 20,5 ց.: Կուբանի փորձնական
կայանում (Կրասնոդար) վեց տարիների ընթացքում գետ-
նախնձորի վարելահողից բարձր բերք է ստացվել—մի հեկ-
տարից՝ 21,6 ց.: Այսպես Հ. Կովկասի բոլոր վայրերում վա-
րելահողերը կարելի չէ յերեք գոտիների (ЗОНЕ) բաժանել.
1. խոնավ. 2. կիսաչորային և 3. չոր: Խոնավ գոտում (Մայ-
կոպ, Կուբան, Արմավիրի մեծ մասը, Տերեկի մի մասը և
Ստավրապոլի շրջաններում) կարելի չէ մաքուր ցելեր չու-
նենալ և աշնանային հացաբույսերը ավելի նպաստավոր է
մշակել կրկնվող բույսերով բռնված հողամասերում: Կիսա-
չորային (Դոնսկոյ, Արմավիրի մի մասը, Շախտինսկի—
Դոնսկոյի հարավային մասը, Սալսկի շրջանի արևմտ. մասը
և Դոնսկոյի արևմտ. մասի շրջաններում) բուսականությամբ
բռնված արտերը չեն ապահովում բարձր բերքատվություն,
այսպիսի ցելերում աշնանացան պետք է կատարել 25%-ից
վոչ ավելի: Արտերը պետք է բռնված լինեն գլխավորապես
ձմերուկով, գդումով. կարելի չէ հացաբույսեր ցանել և
արևածաղկի ու յեղիպտոցորենի Կուլիսներ ունեցող ցելե-
րում: Չոր գոտում (Ստավրապոլի շրջ. հարավային մասը,
Սալսկիյի մեծ մասը, Շախտինսկի—Դոնեցկի և Դոնի շրջան-
ների արևել. մասերում) բուսականությամբ բռնված ցելերի
սխառեմից հարկավոր է հրաժարվել և աշնանային հացաբույ-
սեր այս տեղերում միմիայն մաքուր վարելահողերում սեր-
մանել:

Բացի վերոհիշյալից՝ աշնանացան հացաբույսերի վրա
մեծ ազդեցություն ունի և ցորենի տեսակավորումը ռայոն-
ների համեմատ (сортовое районирование): Ամեն մի ա-
ռանձին ռայոնի համար վորոշված աշնան ցորենի ամենա-
լավ հատընտիր տեսակները՝ բերքատվությունը բարձրաց-
նելու նպատակով կատարված, մեծ նշանակություն ունի:

Բերքատուության տեսակետով համեմատելով չջուկված սերմերը հատընտիր սերմերի հետ, տեսնում ենք, վոր վերջինները բերքը կարող են բարձրացնել մինչև 25-30%-ով: Սերմերի հատընտրությամբ ապահովված և լինում և սերմերի միատեսակությունը և նրանցից ստացված ալյուրի ու հացի միատեսակությունը:

Մեր յերկրի համար աշնանացանի ցորենի ամենալավ ընդունված տեսակները հետևյալներն են. «Կոռպերատորկա», «Ուկրայինկա», «Գոստրիանում 237»: Սրանց սակավության դեպքում կարելի չե գործածել «Ջեմկա» և տեղականներից «Ջանուկի» և «Սեդոուսկա» կոչվածները:

«Կոռպերատորկա» կոչված ցորենի տեսակը նպատակաւարմար է ցանել հետևյալ շրջաններում. Բլոգոդառնայա, հԱլեքսանդրովսկի հարավային մասում, Իզոբելնա-Թիշչենսկի շրջանի կենտրոնական մասում. Վինոգրենսկի արևմտ. մասում, Պետրովսկու Հյուսիս-արևմտ. մասում, Ստավրոպոլի, Պրիկուլմսկի հարավային մասում, Վառանցովո-Ալեքսանդրովսկի, Մոզդոկի շրջանում (Մոզդոկ առանց արևել. մասի) և Տերեկի շրջանի Պրոխլադնենսկի ուսյոնում:

«Ուկրայինկա». սա Դոնի շրջանի համար ամենահիմնական տեսակներից մեկն է համարվում, (բացի Նովոչերկասկի և Մեչոտկի ուսյոններից). Ստավրապոլի, Իզոբելնա-Թիշչենսկի հարավային մասի համար. Ալեքսանդրովսկի, Պետրովսկի արևմտյան մասերի համար. Բլազոդարենսկի արևմտյան մասի համար (Բլազոդարենյոն գտնվում է Ստավրապոլի շրջանում). Կուրանի, Մայկոպի, Արմավիրի, Ադիգեյի, Գիորգեսկու, Մինեռալովոդսկու և Եսենդուկու, Տերեքյան շրջանում գտնված ուսյոնների համար. Ուկրայինկան հարմար է նմանապես Սև ծովյան շրջանների—Ղրիմի ու Անապայի ուսյոններում. Չերքեզիայի, Կաբարդինո-Բալկարիայի, Ոսեթիայի

և Ջեչնայի համար: «Գոսթամում 237» սա մշակված ու դարգացած է Սառատովի փորձնական կայանի աշխատանքներով: Սրան հարկավոր է ցանել Դոնեցկի, Շախտինսկի, Մալսկի շրջաններում, նմանապես Դոնի շրջանի Մեչետինսկի և Նովոչերկասկի ուսյոններում և Տերեկի շրջանի հյուս. արևմտյան մասերում:

«Ջեմկա»: Այս ցորենը մշակել է Ուբեսսայի փորձնական կայանը և ցանում են այն ուսյոններում, ուր Ուկրայինկան է տարածված:


«Սեդոուսկա»: Սրան լավ է ցանել Կուրանի շրջանում. Տեղական տեսակներից «Բանատկան» կարելի չե այն ուսյոններում մշակել, ուր ձմեռվա ցրտերին աշնանացան ալ ցորենները տեսակները չեն կարող դիմանալ:

Ինչ վերաբերվում է աշնանային հաճարին, տեղական հաճար շատ է տարբերվում. նկատողության արժանի չեն հաճարի հետևյալ տեսակները. «Պրոպշոնսկայա», «Պետուսկայա» և «Բեդենչուկ» կոչվածը, վորի հատիկները դեղին գույնի չեն և համար 1 անունն են կրում:

«Պետուսկայա» հաճարը ձմեռվա ցրտերին այնքան էլ դիմացկուն չէ և մեր յերկրի համար նշանակություն չունի. Նա հյուսիսային շրջաններում ավելի բարեխառն ու խոնավ ուսյոնների համար ավելի ձեռնառն չէ:

«Բեդենչուկ» դեղնահատիկ № 1 հաճարը (Բեդենչուկի փորձնական կայանից) լավ է մշակված: Նա տարբերվում է մյուսներից նրանով, վոր թե ցրտի և թե տաքի չե դիմանում և քամիների ու անձրևների տակ յերբեք չի պառկում: Այս տեսակ հաճարը նպատակահարմար է Դոնեցկի, Շախտի և Մալսկի շրջանների համար. նմանապես Վինոգրենսկի, Դիվինսկու և Ստավրոպոլի շրջանի, Թուրքմենական ուսյոնների համար:

Տեղական աշնանային դարին ներկայանում է չորսանիստը (четырёхпосп. ячмень), յերկու տեսակի ձևերով. Աշնանացան դարին ցրտերին չի դիմանում, քանի որ կարող է մշակվել այն տեղերում, ուր ձմեռը սառնիկ չի. ձմեռը



ИНСТИТУТ
ВООРУЖЕНИЙ
Академии Наук
СССР

քրթիւր և, վոր Գրակլի (Կրթանողարի մօտ) փորձնական կա-
յանի դիտողութիւններէց յերեցաւ, վոր 3 տարիների ըն-
թացքում գարնանային գարու բերքը միջին թվով 19 ցենտ-
ների յե հավասար. միևնույն ժամանակ 3 տարիների ըն-
թացքում աշնանային գարու բերքը 31,9 ցենտների եր հա-
վասար: Ի նկատի առնելով այս ամենը՝ հարկավոր է շրջան-
ներում, ուր ձմեռը տաք է, հարկավոր է աշնանային գարու
ցանների հրապարակներն ընդարձակել: Պետք է այս ել նկա-
տել, վոր աշնանային գարին աշնանային ցորենից 7—10
որով աւաջ է հասնում, ուստի արևի կիզիչ ճառագայթնե-
րին չենթարկվելով՝ տալիս է հատիկների արժանիքով բարձր
բերք: Մեր այս բոլոր ասածներից դատ, վորպեսզի բերքը լավ
լինի, պետք է սերմացուն տրիյների միջից անցկացնել: Հար-
կավոր է փորձել ու համոզվել, վոր նա բանելու, ծլելու ըն-
դունակ է: Մակային հիվանդութիւններից ազատ պահելու
համար, հարկավոր է սերմերն ախտահանել ֆորմալինով և
կամ պղնձի արջասպով: Յերբ սերմերն արդեն պատրաստ
են, նրանց պետք է ժամանակին ցանել և անպատճառ շար-
քացանով՝ վորովհետև բերքի առատութեան նկատմամբ դա մեծ
նշանակութիւն ունի: Փորձնական կայանների և առաջա-
վոր կոլխոզների ու սովխոզների դիտողութիւններին նա-
յած՝ Հյուսիսային Կովկասում աշնանացորենի սերմանելու
ամենալավ ժամանակամիջոցը հետևյալն է համարվում:
1. Հյուսիսային շրջաններում.— Դոնեցկի և Շախտինսկի
շրջաններում— լավ է ցանել ոգոստոսի վերջերից մինչև
սեպտեմբերի վերջերը, կատարելով չնչին ընդհատումներ—
յեղանակի ու հողի խոնավութեան հետ կապված: Ցանի
նորման լինելու յե 90—100 կիլոգր. 1 հեկտարի համար:
2. Կենտրոնական շրջաններում.— Դոնսկոյ, Սալսկի արևմտ.
ռայոններում և Կուբանի հյուս. չոր ռայոններում ցանում

են սեպտեմբերի կեսից մինչև նոյեմբերի սկիզբը: Ցանի
նորման մի հեկտարի համար—120—150 կիլոգր.: 3. Սոնավ
շրջաններում—Կուբանի, Արմավիրի և Մայկոպի շրջաննե-
րում սերմանում են՝ հոկտեմբերի սկզբից մինչև նոյեմբերի
սկիզբը: Ցանի նորման լինելու յե 120—160 կիլոգր. 1 հեկ-
տարի համար: 4. Տերեկի շրջանի արևմտ. խոնավ ռայոն-
ներում, Ազգ. ռայոնների կից մասերում ցանը սկսվում է
հոկտեմբերի կեսից մինչև նոյեմբերի սկիզբը: Ցանի նորման
հարկավոր է պահպանել 150—200 կիլոգր. 1 հեկտարի հա-
մար: 5. Ստավրապոլի շրջանում ցանը սկսվում է սեպտեմ-
բերի կեսից մինչև հոկտեմբերի սկիզբը: Ցանի նորման լի-
նելու յե 125—130 կիլ. 1 հեկտարի համար: 6. Սալսկի,
Ստավրապոլի և Տերեկի չորային շրջաններում ցանը սկսվում
է սեպտեմբերի վերջերից և տևում է մինչև հոկտեմբերի
սկիզբները: Ցանի նորման 1 հեկտարի համար պետք է
պահպանել 95—130 կիլոգր:

Աշնանային հաճար ցանելու ամենալավ ժամանակը
համարվում է ոգոստոսի կեսից մինչև սեպտեմբերի կեսը:
Նրան գլխավորապես հյուսիսային շրջաններում են մշա-
կում: Ցանի նորման պետք է պահպանել 1 հեկտարի հա-
մար 80 կիլ.: Աշնանային գարին ընդհանրապես աշնանացո-
րենի հետ միաժամանակ է ցանվում և նորման լինելու յե
120—150 կիլ.: 1 հեկտարի համար:

Աշնանացան կատարելու ժամանակ հարկավոր է հե-
տևյալն ինկատի ունենալ:

1. Վերոհիշյալ ժամանակամիջոցները կարող են իհար-
կէ հաստատուն չլինել. յեղանակն ու հողի խոնավութիւնը
մեծ դեր են խաղում, վորից և ցանելու ժամանակն է կախ-
ված: Վերոհիշյալ ժամանակամիջոցներում կատարված ցա-
ները տարիների ընթացքում ամենաբարձր արդյունք են
տված:

2. Ճանի նորման՝ կախուլն ունենալով հատիկների տեսակից, հատկութիւնից ու նրանց աճելութեան ընդունակութիւնից, կարող է փոփոխակի լինել: Խոշոր հատիկներ, բայց աճելութեան ընդունակութեամբ վատթար սերմեր ցանելու դեպքում նորման պետք է բարձրացնել:

3. Լավ մշակված հողամասերում ցան կատարելիս նորման սակավ է լինում և ընդհակառակը:

4. Յերբ ցանելու ժամանակն ուշացվի, ցանի նորման այդ ուայոնի համար հարկավոր է բարձրացնել:

5. Չոր աշնանը ու չորային տեղերում ցանի նորման հարկավոր է մի քիչ պակասեցնել:

6. Հարկավոր չէ շատ կանուխ աշնանացան կատարել: Այս դեպքում նա միժ ֆետաներ և ստանում ֆետախիչներից՝ հետեյան ճանճից, շվեդական ճանճից և այլն: Յերբեմն էլ բույսերի փթելուց ու թրջվելուց բոլորովին կորչում կամ նստրանում է:

7. Թեթե և վոչ այնքան արդավանդ հողամասերի համար ցանի նորման պետք է պակասեցնել՝ հասցնելով արևելյան չորային մասերում 1 հեկտարի համար 60—65 կիլո:

Մաքուր ցելերում ցանը կատարվում է վերոհիշյալ ժամանակամիջոցներին: Իսկ բուսականութեամբ բռնված ցելերում, բերքի հավաքումից առաջ կամ հետո պետք է սերմանել շարքերի մեջ յեղած և կամ կուլիսավոր ցելերի ընդարձակ տարածութիւնները: Կրկնակոսավոր բույսերը (пропашн. растения) հավաքելուց անմիջապես հետո՝ վար են կատարում 8—10 սանտիմետր խորութեամբ, տափում և ժամանակին ցանում են: Իսկ յերբ բույսի հավաքումն, վորով ցելն է բռնված, ուշանում է, նրա մաքրութիւնը պահպանելու համար կարելի չէ այդպիսի հողամասերում, առանց նախապատրաստական մշակման, բոլորակաձև շար-

քացաններով սերմանում կատարել: Ցանելուց առաջ շարքացանները պետք է կանոնավորապես դնել հարկավոր ցանի համար: Շարքացանի այն մասերը, վորոնք ցանում են, պետք է ֆորմալինով լվանալ: Հարկավոր է նաև շարքացանը մաքրել ուրիշ բույսերի, մանավանդ հաճարի սերմերից: Լավ է հասարակ, սովորական շարքացանով ցանել և վոչ յերբեք ժապավենային լայն շարքերով: Սերմերը հողի մեջ խրել $2\frac{1}{2}$ —5 սանտիմ. խորութեամբ և յերբեք 7 սանտիմետրից ավելի:

Վերջին ժամանակներս մեքենատրակտորային կայանները մեծ դեր են խաղում և տրակտորական ինվենտարի պահանջը ավելի յե դառնում:

Մի քանի խոսք էլ աշնանային հացերի վարելահողերի պարարտացման մասին ասենք:

Հայտնի յե, վոր աշնանային ցորենները պարարտ հող չատ են սիրում: Փորձնական կայանների փորձերից արդեն հաստատված է, վոր աղբով պարարտած հողի մեջ աշնանային հաճարն ու ցորենը առատ հունձ են տալիս: Ավելի ձեռնառու յե 1 հեկտար հողի պարարտման համար 180 ցենտ աղբ վերցնել: Այս քանակութեամբ աղբ գործածելով շրջանային փորձնական կայանը այն նպատակին հասավ, վոր 11% բերքը ավելացավ: Աղովի ծովի մոտ գտնված կայանում նույնը հասավ 36%, Դոնեցկի կայանում՝ 18%, Կուբանի կայանում—21 տոկ. և Եսենտուկի կայանում—14 տոկ: Հետաքրքիր է, վոր չափազանց չորային տարում աղբով պարարտված մեկ հեկտար վարելահողը շրջանային կայանում 6,1 ց. ցորեն տվեց, իսկ ուր վոր պարարտում չէր կատարված, բերքը 3,6 ցենտն. հասավ:

Հանքային պարարտումներից ամենալավը սուպերֆոսֆատն է: Մեկ հեկտարի համար լավ է 50—60 կելոգր. վեր-

ցնել և շարքացանի միջոցով հատիկներն հետ միաժամանակ հողի մեջ թափել: Իսկ յերբ կապակցյալ շարքացան (комбиниров. сеялка) կլինի, սուպերֆոսֆատը պետք է ձեռքով թափել հողի մեջ, միայն թե այս դեպքում նրա նորման 1 հեկտարի համար պետք է մինչև 200 կիլո բարձրացնել: Պետք է նկատել, վոր սուպերֆոսֆատը ձմեռ ժամանակ հատիկները հողի մեջ լավ է պահպանում: Յերկրի նախկին փորձնական կայանում կատարված փորձերը հաստատեցին, վոր 1928թ. սաստիկ ցրտերին, յերբ աշնանացանի սերմերը հողի մեջ սառչում էին, սուպերֆոսֆատով պարարտված հողերի բերքը հետևյալ պատկերն էր ներկայացնում.

Հպարարտված հողը տվել է 8,8 ց. մի հեկտարից. շարքացանի միջոցով 50 կիլոգրամ սուպերֆոսֆատ ընդունած հողը տվել է 17,6 ց. իսկ 210 կիլո ընդունածը՝ 18,9 ցնետներ: Աղբային ու հանքային պարարտումն ստացած հողամասերը ավելի շատ բերք են տալիս, քան թե չպարարտվածները. 180 ց. աղբ տալով մեկ հեկտար հողին՝ նրա ներգործությունը 3 տարի յե տևում. իսկ 45-90 ց. աղբի ներգործությունը 1-2 տարիներ է շարունակվում: 210 կիլ. սուպերֆոսֆատի ուժը 2 տարի յե տևում, իսկ 30-100 կիլ. գործությունը յերկրորդ տարում արդեն թուլանում է:

Մեղանում, Հյուսիս. Կովկասում աշնանացանի հացաբույսերը, ինչպես տեսանք, մեծ նշանակություն ունեն մեր յերկրի համար: Բայց չնայելով նրանց նշանակությանը, նրանց բերքը ախճան էլ առատ ու դիմացկուն չէ: Տեղական փորձնական կայանների յերկարամյա փորձերից հետո մե շարք պրիմներ են մշակված, վորոնք աշնանացանի բերքը զգալիորեն բարձրացնում են: Կոլխոզներն ու սովխոզները պարտավոր են իրենց դաշտերում այս պրիմները լիովին օգտագործել:

Հյուսիսային Կովկասը մեր Խորհրդային Միության համար հատիկների հիմնական մատակարարներից մեկն է. կանոնավոր մշակությամբ կարող ենք բերքը կրկնապատկել. միայն մի պայման պետք է աչքի առաջ ունենալ, այն է՝ հարկավոր է աշխատանքի ընդհանրացած նոր ձևերին անցնել և հողամասերը կանոնավորապես ու իր ժամանակին մշակել ու ցանել:

Աշխատանքի նոր ձևերից ամենաեյականը գործարքն (сдельщина) է հանդիսանում, աշխատանքի կազմակերպումն աշխատանքային որերի սկզբունքներով և նույնպես բրիգադների կազմակերպումը:

Ա. ԳՈՐԾԱՐՔ. Կոլխոզներում յեկամուտները հավասարապես բաժանելու խնդրի հետ սերտ կապված է այն հարցը, թե ինչ յեղանակ պետք է ընդունել յեկամուտներ բաժանելու մեջ, վոր կոլխոզի բոլոր առավելություններն արժանայտվեն, վոր բաժանումը վոչ թե անդամների քանակի, այլ նրանց կատարած աշխատանքի համեմատ լինի: Այստեղ պետք է խոր ուշադրություն դարձնել լավ կոլխոզների կատարած փորձերի վրա: Փորձերը ցույց են տվել, վոր միակ կանոնավոր միջոցը կոլխոզներում աշխատանքը կազմակերպելու՝ այդ գործարքը կարող է լինել:

Գործարքը կոլխոզի ամեն մի աշխատավորի համար զբաղիչ է, վորովհետեւ յուրաքանչյուր անհատ նրա միջոցով իբ կատարած աշխատանքների հետեանքը պարզ տեսնում է: Գործարքի եյությունը հետևյալի մեջն է. Յեթե դու կառքերով ապրանք տեղափոխող ես և արդեն 15 կառք ես փոխադրել, իսկ մյուսը որական 3 կառք, թեև յերկուսդ ել ամբողջ որ եք աշխատել և իրավունք ունեք ասել, թե ամի որ աշխատել եմ, գրիբ մի աշխատանքային օրն, բայց մեկը իսկապես աշխատել է, իսկ մյուսը ծուլությամբ ժամանակը

ն վատնել. ուստի նրան, վոր 15 կառք ապրանք ե տեղափոխել՝ 3 կառք ապրանք փոխադրողի դիմաց պետք ե 5 անգամ ավելի գրել: Ահա գործարքի ամբողջ ելությունը: Լավ կոլխոզներում գործարքի կիրառությամբ վարը մի որվա ընթացքում մի մարդու միջոցով $\frac{1}{3}$ — $\frac{1}{2}$ հեկտարի յե բարձրացել: «Լենինյան» կոլխոզում գործարքի ընդունելությամբ աշխատավորների աշխատանքի յեղները 1 ե կես անգամ բարձրացավ: Այն կոլխոզներում, ուր առաջ գործարքի սխտեման ընդունված չեն, դեզեր եյին կապում որական $\frac{1}{3}$ — $\frac{1}{2}$ հեկտար հողամասից. իսկ յերբ գործարքն ե գործադրվել, նույն աշխատանքը կատարել են $\frac{1}{2}$ հեկտարից: «Ճանապարհ դեպի սոցիալիզմ» կոչված կոլխոզում մի հեկտար հողամասը կրկնակուսով ցանի համար 25 մարդ եյին մշակում, իսկ յերբ գործարքի անցած, նույն հողամասը՝ որական 10 ժամ աշխատելով, 8—10 մարդ միևնույն ժամանակում վերջացրին: «Լենինյան ճանապարհ» կոչված անասնաբուծական կոլխոզում հենց վոր գործարքի սխտեմն ընդունեցին, ամեն մի կթող կին սկսեց 14—15 կով խնամել: Պատահել են դեպքեր, յերբ կոլխոզներում այսպիսի գործարք են մտցրած՝ կթել 12—14 կով. բայց այս յեղանակը իր լավ հետևանքներն ունեցած չե. ապա վորոշել են, վոր յուրաքանչյուր կթող կին պարտավոր ե կթելով 5 լիտր կաթ ամեն մի կովից ստանալ, այսինքն՝ 12 կովից ընդամենը 60 լիտր կաթ՝ հաշվելով կոլխոզներում 60 լիտր կաթը մի աշխատանքային ու: Այս վորոշման հետևանքն այն յեղավ, վոր կթող կանայք նույն քանակությամբ կովերից սկսեցին ավելի կաթ ստանալ: Այն կովերը, վորոնք առաջ 60 լիտր կաթ եյին տալիս, այժմ սկսեցին 70 լիտր տալ: Այս յերբ վույթը կարելի յե նրանով բացատրել, վոր կթող կանայք սկսեցին մեծ ուղադրությամբ իրենց կովերին խնամել, այս-

ինքն՝ ժամանակին կերակրել, մաքրել, բարեխառն ջրով ջրել ե այլն ե այլն:

«Կոլխոզներտը» կոչված կոլխոզը՝ ամենալավ կոլխոզներին խորհրդակցության հրավիրելով (նրանց, վոր աշխատանքի կազմակերպման գործում լավ հետևանքների յե հասնում) պարզվեց, վոր լավ կազմակերպված կոլխոզի հիմնաքարերից մեկն ե գործարքը: Կոլխոզի անդամները մատնացույց արին, վոր յերբ կոլխոզում գործարք չկա, հետևյալ պատկերն ե յերևում. կոլխոզի աշխատավորը՝ դաշտային աշխատանքների ամենահրատապ ժամանակը, ժամը 8-ին տեղից վեր ե կենում, ժամերը կորցնելով, դրացու հետ պայմանավորվում ե, ձի յե փնտրում, յերկար ու բարակ լծում ե ե վերջապես դաշտ ե դուրս գալիս, յերբ արդեն ճաշի ժամն ե հասել: Այնտեղ, ուր գործարք չկա ե յեկամուտը կոլխոզի անդամների թվի համեմատ ե բաժանվում, այսպիսի յերևույթներ դեռ նկատվում են. հարկավոր ե այս թերություններն արմատապես ջնջել:

Բ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ:
Աշխատանքը կազմակերպել՝ ասել ե արտադրողականություն կազմակերպել: Ի՞նչ փորձ ինկատի ունենք աշխատանքի կազմակերպման վերաբերյալ: Մեր փորձը այն ե, ինչ վոր արտադրողական բրիգադների գլխավոր ձեերի մեջ կարողացանք նկատել: Այս վերջիններս կոլխոզային արտադրողականության մեջ վճռական նշանակություն ունեն: Արտադրող բրիգադները կոլխոզային շինարարության հիմնաքարերն են կազմում: Ի՞նչպես պետք ե բրիգադ կազմակերպել: Հարկավոր ե բրիգադ կազմակերպել այն աշխատանքի համար, ինչ վոր արտադրելու մենք մեր աչքի առաջ ունենք: Պետք ե բրիգադներ կազմել վոչ թե բահերի ու ինվենտարի քանակի համեմատ, այլ ինկատի առնելով

Հիշվման համար վորոշված հողամասը, աշխատանքը միա-
տեղ կատարելու հնարավորությունը, մատակարարման
գովարությունները և այլն: Աշխատանքի գնահատումը վոն-
թե փողով պիտի լինի, այլ աշխատանքային որով: Ի՞նչ և
աշխատանքային ու կոշվածք: Նա կոլտոգնիկի գործ դրած
աշխատանքի վարձատրության յեղանակն է: Յեթե կը-
լտոգնիկը աշխատանքի վորոշյալ չափ (норма) և կատարել,
նա մի աշխատանքային որ և ստանում, յեթե վորոշ չափից
ավելի յե աշխատում, ավելի յե ստանում է: Աշխատանքա-
յին որը լավ միջոց և կեղծիչների (սիմուլյանտ) դեմ մա-
քառելու: Վերջինս անկարող կլինի իր վոն-պիտանի աշխա-
տանքը ընդհանուրի աշխատանքի տակ քողարկել, վորով-
հետև աշխատանքային որեր վաստակելով՝ պարզորեն կա-
բելի կլինի նկատել, թե վորքան և աշխատել և վորքան
վաստակել: Այս բոլորի հետևանքն այն կլինի, վոր կեղծիչը,
ծուլը կամ կոլտոգնից բոլորովին կհեռացվի և կամ ուղղվե-
լով, կպսի կանոնավորապես աշխատել:

Այս բոլորն ինկատի ունենալով՝ հենարոհեալան Կոմիտեյի պլենումը կուսակցական կազմակերպությունններին առաջարկում է հետևյալ ծրագրի իրագործումը, վոր սերտորեն կապված է բերքահավաքման ու աշնանային ցանքի կամպանիայի հետ:

1. Կոլխոզներում բոլոր աշխատանքները պետք է գործարքի հիմունքներով կատարվեն: Գործարքի բոլոր յեղանակները պետք է պարզ ու հասկանալի լինեն ամեն մի կոլխոզնիկի համար: Կոլխոզնիկի ունեցած բոլոր աշխատանքային ուրերը պետք է արձանագրված լինեն մատյանի մեջ առանց բարդ հաշիվների, բայց նրա աշխատանքի ժողովան ի նկատի առնելով:

Սովխոզները գործարքի սխառեմն ընդունելով՝ որինակ

պիտի դառնան կոլեոզներին, ինչպես վոր որինակ են իբրև
արտադրող կազմակերպիչներ ու մեքենաներ բանաժողովներ:

2. Բոլոր աշխատանքները կատարելու համար պետք է աշխատավորների հաստատուն խմբավորումներ ունենալ, ինչպես տրակտորի, մեքենաների ու ձիերի համար: Ամեն մի կալ-տիչ մեքենայի, ամեն մի տրակտորի՝ իրեն համապատաս-խան մեքենաների հետ, պետք է մշտական բրիգադներ հաս-կացվեն:

Ապրանքներ տեղափոխելու համար պետք է փոխադրիչ խմբեր կազմակերպել և այլն:

3. Վորպեսզի իր ժամանակին իրագործվեն կոլխոզները կոնտրակտացիոն պայմաններն և սովխոզների արտադրած զաւան ծրագիրները՝ ապրանքը տերության հանձնելու, կուսակցական կազմակերպություններն ու հողային որգանները պետք և 1931 թ. ամառվա ու աշնան վարն ապահովեն՝ 15 միլիոն հեկտար հողամասեր աշնանացանի համար և 43 միլիոն հեկտար աշնանային հացերի համար, վորից 15 միլիոն հեկտար ցորենով պետք և ցանվի։ Նմանապես խոր աշնանավար կատարել 42 միլ. հեկտար, վորից 9 միլ. պետք և սովխոզները վարեն, իսկ 31 միլ. կոլխոզները։ Այս աշխատանքների իրագործումը պահանջում է, վոր մարդիկ տրակտորներ, ձիեր, մեքենաներ հավասարապես բաժանված լինեն. նմանապես նրանց արտադրողականությունը մաքսիմալ լինի, վոր ամեն մի սովխոզ ու կոլխոզ պարտական է նախատեսել։

4. Գործարքը իրագործել կարելի է, յեթե իր Ժամանակին չենք հաշվում ամեն մի կոլխոզնիկի աշխատանքի օրերի թիվը: Առանց հաշվառքի անհնարն է կոլխոզի գոյութունը: Կենտրոնական Կոմիտեն բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպութուններին առաջարկում է բո-

լոր կոլխոզներում նախորոք հաշվել աշխատանքի որերը և ամփոփ հաշիվ ձեռքի տակ ունենալ:

5. Հավաքման ու աշխատավարի ու ցանքի կամպանիան հաջողապես առաջ տանելու համար հարկավոր է ժամանակին կոլխոզների մեջ յեկամուտը բաժանել:

ա) Յեկամտի բաժանումը կոլխոզները չպետք է հետաձգեն հունվարի 15-ից հետո:

բ) Ամեն մի կոլխոզ յեկամուտները բաժանելու ծրագիրը հաստատելով, առանձին գումար է վորոշում հիմնական ծախսերի համար (неделимый фонд): Այսպիսի ծախսերի համար նորակազմ կոլխոզները իրենց յեկամտի 10 տոկոսն են հատկացնում, իսկ հները՝ մինչև 15 տոկոս:

գ) Կերի պաշար բաժանելիս՝ նախ և առաջ ինկատի յեն առնվում հանրացած աշխատող անասունները: Ֆինացյալը կոլխոզիկներին է հատկացվում. նրանց աշխատանքային որերի համեմատ՝ աչքի առաջ ունենալով է նրանց աշխատող անասունները:

դ) Սերմացույի ֆոնդին կոլխոզները այնքան են վորոշում հատկացնել, վոր հնարավոր լինի ցանների հրապառարակն ընդարձակել, վորը և արդեն ծրագրով նախատեսված է. միևնույն ժամանակ կոլխոզի վարչությունը պետք է ցուցմունքներ մշակե, թե ինչպես պետք է սերմացույի ֆոնդը ջրկվի ու պահպանվի, լինելով լավ հատկության տեր:

յե) Այն դայոններում, ուր 100 տոկոսով կոլեկտիվացումն է կատարված, ընդհանուր յեկամուտից պետք է առանձին 5% հանել. այդ 5% հատկացումը հետևյալ կերպով ոգտագործել. 2% տրվում է կոլխոզիկների հանրացած գույքի համար. $1\frac{1}{2}\%$ բրիգադի անդամներին մրցանակ բաշխելու համար և $1\frac{1}{2}$ էլ կոլխոզիկ ուսանողներին

և հատկացվում, վորոնք զանազան կուրսերում ուսում են ստացել:

զ) Կենտրոնական Կոմիտեյի պլենումը առանձնապես նշանակում է մեքենա-տրակտորային կայանների պատասխանատու դերը, վոր դրված է մեքենա-տրակտորային կայանների վոչ իբրե տեխնիկական կազմակերպիչների առաջ, այլ վոր նրանք կոլխոզների բոլոր տնտեսությունների կազմակերպողներ են:

ը) Կենտրոնական Կոմիտեյի պլենումը կուսակցական կազմակերպությունների ուշադրությունն է դարձնում այն կետի վրա, վոր 4200 հազար հեկտար ցանքերի հավաքումը և 160 միլ. փութ ապրանք տերության հանձնելը՝ հավաքման կամպանիայի ամենագլխավոր խնդիրներից մեկն է լինելու:

թ) Վոչ պակաս նշանավոր խնդիրներ են դրված և անասնաբուժական կոլխոզների առաջ: Նրանք արտադրողական ծրագրի համեմատ այս տարի պարտավոր են 350 միլ. փութ խոտ հավաքել, 100 միլ. փութ. հյութալից կերեր, 35 միլ. փ. հատիկային խոտ (ֆուրած) և այլն:

Այս պայմաններն յերբ իրագործվեն, մեր աշխատանքը 100% համապատասխան կլինի մեր կուլտուրական պահանջներին:





4-й 66 7 400

247658

17.097

Цена / коп
с. х. 4. 0.



На армянском языке

Агроном Л. ВОСКАНЯН
ПОДГОТОВИТЕЛЬНЫЕ РАБОТЫ
К ОСЕННЕЙ ПОСЕВНОЙ
КОМПАНИИ 1931 г.

Сев.-Кав. Кр. отд ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР.
„КРАЙНАЦИЗДАТ“